**BULLETIN DE L'ACAM**
**N° 13**
**Juillet-Août-Septembre**
**1991**

# ASSOCIATION CULTURELLE ARMENIENNE DE MARNE-LA-VALLEE

1, avenue Houette 93160 NOISY LE GRAND

**Directeur de la publication**
Philippe Pilibossian
**Rédacteur en chef**
Jean-Pierre Hatchikian
**Rédacteur-Adjoint**
Daniel Ter Sakarian

ՄԱՌՆ-ԼԱ-ՎԱԼԷԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

## Sommaire

**ACTIVITES DE L'ASSOCIATION**

Page 1

Prochaines activités
Rentrée 1991

Subvention reçue de
la Municipalité de Noisy-le-Grand

**FORUM DES ASSOCIATIONS A NOISY-LE-GRAND**

Page 8

Venez au stand de l'ACAM
Samedi 5 et
Dimanche 6 octobre 1991

**INFORMATIONS DIVERSES**

Page 2

Les activités de la
Maison Pour Tous Pottier/Centre
à Noisy-le-Grand

Carnet

**LA SAISON 1991-1992 A MARNE-LA-VALLEE**

Page 3

Espace Michel Simon
à Noisy-le-Grand

Théâtre de Chelles

**EPHEMERIDES**

Pages 4 et 5

Les événements de la vie
arménienne, 1931-1940

Pages 6 et 7

La vie culturelle
arménienne, 1931-1940

# RENTREE 1991
# IL FAUT VITE S'INSCRIRE !

**Cours de langue arménienne pour adolescents et adultes débutants**
**(3ème année successive de cours)**

**Cours de langue arménienne pour adolescents, moyens et confirmés**

Ces cours sont donnés par Mme BALIAN, professeur, à la Maison Pour Tous du Champy, 9, allée du Bataillon Hildevert à Noisy-le-Grand ; ils s'appuient sur la méthode audio-orale *Parèv* de H. KURKJIAN.

Inscriptions et détails pratiques : contacter Mme Suzanne MORILLE (Tél.. 60.08.13.38, le soir), inscription également à la Maison Pour Tous du Champy.

**Cours de danse traditionnelles arménienne (création cette année)**

Inscriptions et détails pratiques : contacter Mme CILIAN (Tél. 43.03.20.00)

**Forum des Associations à Noisy-le-Grand**
**les Samedi 5 et Dimanche 6 octobre 1991**

Comme à l'accoutumée, l'ACAM sera présente à cette manifestation destinée à présenter les activités des associations et à de fructueuses prises de contact avec membres et non membres.

Ouverture au public :
- Samedi 5 octobre 1991 de 14 à 19 heures
- Dimanche 6 octobre 1991 de 10 à 19 heures.

## TOUS A LA FETE DE NOISY-LE-GRAND LES 5 ET 6 OCTOBRE 1991 !

***SUR LE BLOC-NOTE DU TRESORIER***
**Ordre de virement en date du 12/07/91**

Montant ......................: 5 000 F
Donneur d'ordre.......: VILLE DE NOISY-LE-GRAND
Motif de l'opération .: SUBVENTION 1990
Bénéficiaire .............: ASSOCIATION CULTURELLE ARMENIENNE M.L.V

# LA MAISON POUR TOUS CENTRE / POTTIER

*Un ensemble très diversifié.*

Notre Association Culturelle Arménienne de Marne-la-Vallée est membre de l'Association Noisy-Centre/Maison pour Tous Eugène Pottier, qui répartit ses activités sur deux sites principaux :

- Eugène Pottier, 111 la Piazza Mont-d'Est (Service accueil : du Lundi au Vendredi de 10 h à 19 h, Samedi de 14 h à 18 h, Téléphone : 43.05.49.11)
- Noisy-Centre, 6, rue de la République ((Service accueil : du Lundi au Vendredi de 14 h à 18 h, sauf Mardi, Téléphone :43.03.65.16).

La Maison Pour Tous propose ses activités à tous et à toutes : vous en trouverez l'essentiel dans le dépliant joint au présent numéro du *Bulletin de l'ACAM*. Un guide complet des activités régulières est disponible pour la saison 1991-1992.

Nos membres et amis trouverons ci-dessous une présentation de l'avant-projet du programme 1991-1992 pour les activités exceptionnelles.

## ACTIVITES EXCEPTIONNELLES

- **Exposition Danse contemporaine**, du 23 septembre au 13 octobre 1991
- **Forum des Associations**, les Samedi 5 et Dimanche 6 octobre 1991
- **Comédie musicale**, Samedi 19 octobre 1991
- **Troc et Musique**, Samedi 16 novembre 1991
- **Beaujolais Nouveau**, Jeudi 21 novembre 1991
- **Exposition Presse**, du Vendredi 6 au Vendredi 20 décembre 1991
- **Soirée Chanson française**, Vendredi 31 janvier 1992
- **Soirée conviviale bulgare**, Vendredi 14 février 1992
- **Arts et boutiques**, au mois de mars 1992
- **Assemblée générale** de la MPT, Vendredi 12 juin 1992
- **Fête communale** de Noisy-le-Grand, les Samedi 13 et Dimanche 14 juin 1992
- **Fête de la Maison Pour Tous**, les Vendredi 19 et Samedi 20 juin 1992
- **Fête de la Musique**, le Dimanche 21 juin 1992.



# mémo :

### JOYEUX ANNIVERSAIRE EN OCTOBRE 91

- le 2, Garabet LALIKOGLU, Gonesse
- le 8, Nechan SAMOUELIAN, Aulnay-sous-bois
- le 9, Karine GOKDEDE, Villiers-sur-Marne
- le 13, Azad KIBARIAN, Paris
- le 17, Serge KAZANDJIAN, Gournay-sur-Marne
- le 18, Gérard BEDROSSIAN, Villemomble
- le 18, Mihran KURKDJIAN, Gournay-sur-Marne
- le 19, Paul MELKONIAN, Champigny-sur-Marne
- le 21, Thibaut BOUCHOUDJIAN, Sevran
- le 21, Catherine NORIGUIAN, Gagny
- le 21, Armand ZAHREDJIAN, Villemomble
- le 22, Alexandre ISRAELIAN, Gressy
- le 28, Fanny BOUCHOUDJIAN, Sevran

### JOYEUX ANNIVERSAIRE EN NOVEMBRE 91

- le 1er, Madeleine SARIAN, Le Perreux-sur-Marne
- le 2, Azad DER SARKISSIAN, Neuilly-sur-Marne
- le 4, Catherine YEREBAKANIAN, Noisy-le-Grand
- le 9, Arlette ISRAELIAN, Gressy
- le 9, Roger PENICHON, Pierrefitte
- le 13, Mathias MORILLE, Chelles
- le 18, Gary DUHANYAN, Noisy-le-Grand
- le 26, Patrick SAMUELIAN, Paris

### JOYEUX ANNIVERSAIRE EN DECEMBRE 91

- le 2, Sevan OHANYAN, Villemomble
- le 6, Louis YEREBAKANIAN, Noisy-le-Grand
- le 8, Annette PALUYAN, Villemomble
- le 8, Jacques YERAMIAN, Noisy-le-Grand
- le 9, Pierre BEYEKLIAN, Le Kremlin-Bicêtre
- le 10, Zarouhie DJIVELEKIAN, Champs-sur-Marne
- le 10, Alexandre NALCHAJIAN, Noisy-le-Grand
- le 10, Danièle VAGHARCHAKIAN, Chelles
- le 11, Hera DER SARKISSIAN, Neuilly-sur-Marne
- le 15, Arpi OHANYAN, Villemomble
- le 16, Elisabeth SOUDJOUKDJIAN, Chelles
- le 18, Armine KHERIMIAN, Chelles
- le 21, Mireille PENICHON, Paris
- le 21, Marie ZARTARIAN, Neuilly-sur-Marne
- le 23, Mireille DUHANYAN, Noisy-le-Grand
- le 27, Florette KURKDJIAN, Gournay-sur-Marne
- le 29, Saro MINASSIAN, Chelles



# LA SAISON 1991-92 A MARNE-LA VALLEE

*Une sélection des plus importants spectacles.*

## Espace Michel Simon

**36, rue de la République**
**93160 NOISY-LE-GRAND**
**(1) 49.31.02.02**

*LE MAITRE DE GO*, de Yasunari Kawabata, dans une adaptation de Philippe Faure et une mise en scène de Jean-Paul Lucet, avec Michel Bouquet
Samedi 5 octobre, à 21 h.

*LES CONTES ET EXERCICES*, d'Eugène Ionesco, dans une adaptation scénique et une mise en scène de Claude Confortes, avec la Compagnie Claude Confortes ; coproduit par Michel Simon Arts Productions
Samedi 12 octobre, à 21 h.

*ENSEMBLE BAROQUE DE LIMOGES*, Récital Jean-Sébastien Bach
Mercredi 23 octobre, à 21 h., à l'Eglise Saint-Sulpice de Noisy-le-Grand

*LA NUIT DE L'IGUANE*, de Tennessee Williams, traduction de Gérard Wajcman, dans une mise en scène de Brigitte Jaques, par La Comédie française
Mardi 19 novembre, à 20 h 30.

*KATIA ET MARIELLE LABEQUE*, Récital de piano
Vendredi 22 novembre, à 21 h.

*LE LAC DES CYGNES*, musique de Piotr Illyitch Tchaïkovski, chorégraphie d'après Marius Petipas, avec le Ballet de l'Opéra de Riga
Jeudi 5 décembre, à 21 h.

*ARMIDA*, Opéra de Joseph Haydn, production de l'Atelier de Recherche et de Création pour l'Art Lyrique, interprété par l'Ensemble Mosaïques, sous la direction Christophe Coin
Création le Jeudi 9 janvier, à 21 h.

*WILHELMENIA FERNANDEZ*, Récital lyrique, Orchestre National d'Ile-de-France
Jeudi 16 janvier, à 21 h.

*A MARGUERITE*, Tragi-comédie en deux actes de Roberto Athayde, mise en scène et scénographie de Jean-Vincent Lombard, avec Bernadette Laffont
Mardi 28 janvier, à 21 h.

*COMPAGNIE MAGUY MARIN*, création d'un ballet
Samedi 1er février, à 21 h.

*RIGOLETTO*, Opéra en quatre actes de Verdi, livret de Francesco Maria Piave, d'après Le Roi s'amuse de Victor Hugo, par le Theatro Lirico Toscanini de Milano
Vendredi 7 février, à 20 h 30.

*OKLAHOMA*, Comédie musicale d'Hammerstein et Rodgers, par l'American Musical Company
Vendredi 14 février, à 21 h.

*MAURICE ANDRE*, Concerto pour trompette et orchestre en ré majeur, de Tartini, Concerto pour trompette et orchestre en ré mineur, de Marcello, avec l'Ensemble Orchestral de Normandie sous la direction de Jean-Pierre Berlingen
Samedi 22 février, à 21 h.

*LA VALSE DES TOREADORS*, de Jean Anouilh, Création Michel Simon Arts Production, Jeudi 27 et Vendredi 28 février, à 21 h.

*L'HERITAGE*, de R. et A. Goëtz, d'après une nouvelle d'Henry James, adaptation française de L.Ducreux, mise en scène de G.Bourdet, avec François Périer
Samedi 21 mars à 21 h et Dimanche 22 mars à 15h.

*NEUVIEME SYMPHONIE DE BEETHOVEN*, par le Chœur de la Cathédrale Alexandre Nevski et l'Orchestre philharmonique de Sofia
Mercredi 25 mars, à 21 h.

*LOHENGRIN*, Opéra en trois actes de Richard Wagner,
Vendredi 3 avril, à 20 h. (attention: 20 heures)

*VOLPONE*, de Ben Jonson, avec Guy Tréjean et Francis Perrin
Samedi 11 avril, à 21 h.

*TARTUFFE*, de Molière, par le Théâtre du Triangle, avec Jean-Laurent Cochet dans le rôle d'Orgon
Mardi 21 avril, à 21 h.

*COMPAGNIE NOMADES*, Récital de danse contemporaine
Vendredi 22 mai, à 21 h.

*QUATRE SAISONS*, de Vivaldi

*THE WAY OF ZION*, de Hændel, par l'Ensemble Instrumental Jean-Walter Audoli
Samedi 30 mai, à 21 h., à l'Eglise Saint-Sulpice de Noisy-le-Grand

*KREISLER STRING ORCHESTRA*
Mardi 16 juin, à 21 h., à l'Eglise Saint-Sulpice de Noisy-le-Grand

-----

## Théâtre de Chelles

**Place des Martyrs**
**de Chateaubriant**
**77500 CHELLES**
**(1) 60.08.55.00**

*LA BELLE AU BOIS DORMANT*,
Ballet féerie en trois actes, musique de Tchaïkovski, dans une chorégraphie de Marius Petipas
Samedi 26 octobre, à 21 h.
Dimanche 27 octobre, à 15 h.

*SOIREE MOZART*, organisée par la Ville de Chelles, Orchestre Divertimento de Chelles, dirigé par Robert Dautigny et le Chœur Arpaggione de Gagny, dirigé par Patrick Marco
Programme : Bastien Bastienne, Divertimento en Fa, Sérénade nocturne, Air de concert, Petite musique de nuit, Requiem
Samedi 7 décembre, à 21 h.

*SACREE GLADYS*, comédie d'Aldo Nicolaj, adaptation de Philip March, dans une mise en scène de Danièle Chutaux, avec Annie Cordy, Jacques Balutin, et Alain Lionel
Dimanche 22 décembre, à 15 h 30

*LE TARTUFFE*, de Molière, par les Tréteaux de France, avec Jean Topart
Vendredi 27 mars 1992, à 21 h.
Samedi 28 mars 1992, à 21 h.

# ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

ԱՌԱՋԻՆ աշխարհամարտին մարդկութիւնը ատեն մը շունչ քաշեց, սակայն ժողովուրդին աճը, երկրագործական ու ճարտարարուեստական արտադրութիւններու առատութիւնը եւ անոնց սպառման նուազումը 1929-ի աշնան ամերիկեան սակարանին սնանկութեան յանգեցան, որուն ալիքները Եւրոպա հասնելով իրենց հետ բերին ամերիկեան անգործութեան ու թշուառութեան տխուր հետեւանքները:

Կարգ մը յղփացած ազգերու թուլութիւնը, անկախութիւնը նոր ստացած երկիրներու յոխորտանքը եւ, զուգահեռաբար, պարտուած ազգերու խոցուած ազգային արժանապատուութեան հետ հողային անդամահատումները անոնց վրէժխնդրական զգացումները գրգռեցին:

Սովետական Միութեան ծաւալապաշտական նպատակներուն ընդդիմանալու համար կարգ մը դրամատիրական երկիրներ նոյն քաղաքականութեան հետեւեցան:

Տնտեսական տագնապին ընթացքին գիները ինկան, օրավարձերը կրճատուեցան, անգործութեան հետեւանքով սնանկութիւնները շատցան: Շատ մը երկիրներու մէջ անգործութիւնը տեղական մեծագոյն ճարտարարուեստը նկատուեցաւ: Այսպէս՝ Միացեալ Նահանգները 14 միլիոն անգործներ հաշուեցին, Անգլիա՝ 2,6 միլիոն, Ֆրանսա՝ 1,5 միլիոն:

Պետութիւնները չյաջողեցան եւրոպական Դաշնակցութիւնը գլուխ հանել, Գերմանիա պատերազմական վնասուց հատուցումներու վճարումը դադրեցուց, ընդհանուր զինաթափութեան համաժողովը ձախողեցաւ, եւ ժողովուրդը սկսաւ մեռնիլ... լեցուն ամբարներու դիմաց:

Միացեալ Նահանգներու նախագահ Րուզվէլթ խիստ միջոցներու դիմեց առանց նախկին բարեկեցութեան հասնելու: Գերմանիոյ մէջ Հիթլէր, Իտալիոյ մէջ Մուսոլինի, Սպանիոյ մէջ Ֆրանքօ, Փորթուկալի մէջ Սալազար, Բոլոնիոյ մէջ Բիլսուտսքի, Թուրքիոյ մէջ Մուսթաֆա Քէմալ, Ռուսիոյ մէջ Ստալին եւս բռնատիրական միջոցներու դիմեցին:

Ազգերու Դաշնակցութեան տկարութենէն օգտուելով, իրենց « կենսական տարածութիւնը » ընդարձակելու համար Իտալիա Ալպանիան եւ Եթովպիան գրաւեց, Ճաբոն Չինաստանի վրայ յարձակեցաւ, Թուրքիա Սանճաքին տիրացաւ, Գերմանիա Աւստրիան գրաւեց եւ Չեխոսլովաքիայէն մաս մը իւրացուց, եւ Երկրորդ Աշխարհամարտին Խորհրդային Միութեան հետ Բոլոնիան կիսուելէ ետք, Պելճիքան, Լիւքսէնպուրկը, Հոլանտան, Տանըմարքան, Նորվեկիան ու Ֆրանսան շանթահարեց:

Այս տասնամեակին Ֆրանսա աղմկալի շրջան մը բոլորեց. Ռուս գաղթական Կորկիւլոֆի կողմէ նախագահ Տումէրի սպանութենէն ետք (13 Մայիս 1931) - որուն համար Փարիզի Հայոց եկեղեցին յատուկ պատարագ մատոյց - նախագահ Լըպռէօն Բիէռ Լավալը եւ Անտռէ Թառտիէօն վարչապետ կարգեց, սակայն բարոյական ու տնտեսական դժուարութիւններն ու գայթակղութիւնները վարչակարգի ճգնաժամ մը ստեղծեցին, առիթ ստեղծելով որ ընդդիմադիր տարրերը 1934 Փետրուար 6-ին Խորհրդարանին վրայ քալեն, իբր « գողերու որջ », եւ կառավարութիւնը տապալեն: Փարիզ, բլաս տը լա Քոնքորտի վրայ եղած ցոյցերը, որոնք արիւնով ներկուած էին, մեծ արձագանգ գտան ամէն տեղ, եւ յաջորդ շաբթուան ձախ կողմեաններու հակացոյցերը ժողովրդական ճակատին ծնունդ տալով, 1936-ին Խորհրդարանին ու Կառավարութեան տիրացան:

Սակայն ներքին եւ արտաքին ազդակներու ազդեցութեան տակ այս միութիւնը քայքայուեցաւ: Քիչ յետոյ Ֆրանսա, բարոյապէս ու նիւթապէս անպատրաստ, 1939 Սեպտեմբեր 3-ին ակամայ Երկրորդ Աշխարհամարտին մասնակցելէ ետք չարաչար պարտուելով 1940 Յունիս 22-ի զինադադարը ստորագրեց, մինչ անդին, Լոնտոն ապաստանած զօրավար Տը Կօլ Դիմադրութեան դրօշակը բարձրացուց մինչեւ յաղթանակ:

Բնականաբար միջազգային եւ ֆրանսական իրադարձութիւնները պիտի ազդէին հայկական կեանքին վրայ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ մէջ ուրախութեամբ արձանագրեցինք անգրագիտութեան վերացումը. վարժարաններու աշակերտութեան թիւ 1940-ին 320 000-ը կ'անցնի, հարիւրաւոր գրադարաններ, թանգարաններ հանրութեան տրամադրութեան տակ են, 700 անուն գիրք կը հրատարակուի եւ 819 000 տպաքանակով հանդէսներ լոյս կը տեսնեն, Զորագէսի ելեկտրակայանը կը կառուցուի, Ալլահվէրտիի եւ Ղափանի պղնձագործարանները կ'ընդարձակուին, նոր ջրանցքներ աղի եւ խոպան հողերը մշակելի կը դարձնեն, հաւաքական տնտեսութիւնները կը մեքենայացուին:

Ժողովուրդին կենսամակարդակին բարձրացման հետ քաղաքաշինութեան մեծ զարկ կը տրուի. բնակչութեան թիւը 1 280 000-ի կը բարձրանայ, որուն հարիւրին 82,8 տոկոսը Հայեր են, Երեւանի բնակչութեան թիւը 200 000-ը կ'անցնի, եւ կացութիւնը թոյլ կու տայ որ, մինչեւ 1936 45 000 անձեր ներգաղթեն Պուլկարիայէն, Յունաստանէն ու Ֆրանսայէն, ներառեալ Մինաս Չերազի եւ Կոմիտաս վարդապետի աճիւնները:

Սակայն դժբաղդութեամբ արձանագրեցինք նաեւ Սահմանադրութեամբ հաստատուած խօսքի, մամուլի, ցոյցեր կազմակերպելու ազատութիւններուն ոտնահարումը, եւ նիւթական վերելքին

# 1931 - 1940

*ընդդէմ ընկերային վայրէջքը. այսպէս կոչուած « անձի պաշտամունքի » շրջանին « ստալինեան պողպատեայ Հարուածը » իջաւ անխտիր, սկսեալ Համայնավար կուսակցութեան առաջին քարտուղար Աղասի Խանջեանի « անձնասպանութեան » դէպքէն, որպէս « գերի Դաշնակցութեան եւ Ռամկավարութեան ձեռքը » - յանձինս « ծեր աղուէս » Արշակ Ջօպանեանի - մինչեւ Հազարաւոր մտաւորականներու վրայ, որոնց կարգին Զապէլ Եսայեան, Ակսել Բակունց, Գուրգէն Մահարի, Եղիշէ Չարենց, որոնց բերանը գոցեցին բանտով, աքսորով ու մահով:*

*Նաեւ դպրոցական գիրքերու պարունակութիւնը փոխուեցաւ որպէս Հակայեղափոխական, առաջարկուեցաւ նոյնիսկ մեսրոպեան այբուբէնը ջնջել, նամակագրութեան եւ մամուլի փոխանակութեան սեղմումներ Հաստատուեցան, եւ Հարթիչ գլանը Հասաւ մինչեւ ՀՕԿ-ին, Բարեգործականին, Մելգոնեան ֆոնտին վրայ, որոնք « լուծարքի » ենթարկուեցան. Հայաստանի Հետ յարաբերութիւնները միակողմանի որոշումով խզուեցան:*

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ *Միութեան եւ դրամատիրական երկիրներու Հակամարտութիւնները սուր աստիճանի Հասնելով մութ շղարշով մը ծածկեցին Սփիւռքահայ քաղաքական կեանքը երկու Հակամարտ Հոսանքներու մենաշնորհը դարձնելով զայն. Խորհրդային Հայաստանի բարեկամներ՝ Ռամկավար-Ազատական-Հնչակեան-Համայնավար կուսակցութիւնները իրենց արբանեակներով, եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, որ նախկին Հանրապետութեան աւագանիին ղեկավարութեամբ, Հայաստանի մէջ տիրող դասակարգը փոխելու Համար կ'ուզէ որ « արտասաՀմանի Հայերը Համայնավարութեան դէմ միացեալ ճակատ մը կազմեն » (Յառաջ, 26 Փետրուար 1932), եւ Հակասովետական բոլոր տարրերուն Հետ դաշնակցիլ, ի Հարկին զինու զօրութեամբ - ինչպէս յայտարարեց Արշակ Ջամալեան, Մարսէյլ, « Անկախութեան գաղափարի մասին » իր Հրապարակախօսութեան ընթացքին, - Միացեալ եւ Անկախ Հայաստանը վերակենդանացնելու Համար եւ, խօսքէն գործի անցնելով, պատերազմի ընթացքին մամլով, Շթութկարթի ձայնասփիւռի սրսկումներով, եւ ԽորՀրդաՀայ գերիներու վաշտերով, որոնց գերման տարազին վրայ եռագոյնը կը փայլէր, ֆրանսական դիմադրական ուժերուն դէմ ելան, « Լուսին չկար, մութ գիշեր էր » Հայդուկային երգը ընտրելով որպէս քայլերգ:*

*Այս միաՀեծան կազմակերպութիւնն ալ, ուրիշներու նման, իր աճման տագնապը ունեցաւ 1932-ին Մարտկոցական շարժումին երեւումով: Կարգ մը մտաւորական ընկերներ, ուզեցին կուսակցութեան Կեդր. Դիւանին անդամները Հաշուետուութեան ու պատասխանատուութեան ենթարկել իրենց անցեալ գործունէութեան Համար եւ ապստամբութեան դրօշը պարզեցին. կուսակցութեան Արեւմտեան Եւրոպայի Կեդրոնական Բիւրոն « ծանր Հակակարգապահական յանցանքներու Համար Հ.Յ.Դ. շարքերէն վտարեց » Աբօ Աբոյեանը, Մկրտիչ Երիցանցը, Լեւոն Մօզեանը, Վազգէն Շուշանեանը, Մեսրոպ Գույումճեանը:*

*Արտաքսեալները Մարտկոց անունով թերթ մը Հրատարակելով փորձեցին Կեդրոնական Կոմիտէն տապալել, նաեւ ՀՕԿ-ը - ինչպէս մեզի յայտնեց Վազգէն Շուշանեան Մարսէյլի մէջ, - սակայն յեղափոխական կրակը շուտ մարեցաւ:*

*Խորհրդային Հայաստանի թեր ու դէմ տարրերը, չբաւականանալով լրագրային վէճերով ու Հրապարակային բանախօսութիւններով զիրար վարկաբեկել, ծեծի ու դաշոյնի դիմեցին զանազան երկիրներուն մէջ, ու մինչեւ Սպանական քաղաքացիական պատերազմին մասնակցեցան Հակառակորդ երկու ճակատներու վրայ, իրենց ոխին յագուրդ տալու Համար:*

*65 000-նոց ՖրանսաՀայ գաղութին մէջ քիչեր մասնակցեցան այս Հայ-եւ-Հայ ընդՀարումներուն: Տիրող տնտեսական տագնապին, քաղաքական անստուգութեան առթիւ կառավարութիւնը կարգ մը Հայ Համայնավարներ ձերբակալեց ու երկրէն արտաքսեց, նախընտրաբար Ֆրանսացիներու գործ ապաՀովելու Համար 10 %-ի օրէնքով շատ մը Հայեր իրենց պաշտօնները կորսնցուցին, 28-էն 31 տարեկան անՀպատակ օտարները - մէջն ըլլալով Հայերը - զօրակոչի ենթարկուեցան առանց քաղաքացի դառնալու:*

ԲԱՐԷՆ *Հաց Հանող Հայը արՀեստաւոր ու առեւտրական դարձաւ, շուկայի շրջուն վաճառական, եւ ասիկա շատերուն Համար բարիք մը եղաւ. անոնք ազատութեան Հետ երբեմն շաՀաբեր տնտեսութիւններու տիրացան:*

*Այստ Հանդերձ մամուլը բանեցաւ, կրթական, նկարչական, գրադարանային, թատերական, երաժշտական, մարզական, Հայրենակցական շարժումները աշխոյժ կերպով գործեցին:*

*Երբ պատերազմը յայտարարուեցաւ 20-էն 48 տարեկանները զօրակոչի ենթարկուեցան. անոնցմէ ոմանք վիրաւորուեցան կամ մաՀացան, իսկ մեծամասնութիւնը գերի մնաց թշնամիին ձեռքը: Փարիզի մէջ Հայ զինուորներու օգնութեան մարմին մը կազմուեցաւ, Հ.Բ.Ը.Մ.-ը գաւառ անցաւ, սակայն Ա. Ջօպանեանի Հայ գաղթ. յանձնաժողովը, Ա. Խատիսեանի եւ Լ. Բաշալեանի զոյգ օֆիսները շարունակեցին գործել:*

**ԼԵՒՈՆ ԽԱՉԻԿԵԱՆ**

# ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

**Մամուլ՝**

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ. Դիտրոյիտ՝ Վարագ, Տարօնի արծիւ. Լոս Անճէլէս՝ Հայ լրաբեր, նոր ուղի. Պէրքըլէյ՝ Լոյս. Նիւ Եորք՝ Լուսաւորիչ, Լրաբեր, Կարմիր խաչ, Նոր գիր, Նոր Կեսարիա, Նոր Զնքուշ, Նոր Սեբաստիա. Ուոթըրթաուն՝ *The Armenian Mirror-Spectator*. Զիքակօ՝ Կանթեղ. Պոսթոն՝ Կանթեղ, Հայ կարմիր խաչ, Հայ Օգնութեան Միութիւն, Հայ վաստակ, Նոր Խարբերդ, Վասպուրական, Վտակ. Րէյսին՝ Նոր Թոմարզա. Քլիվլէնտ՝ Պապ ուխտի. Ֆիլատէլֆիա՝ Լոյս, Կռունկ:

ԱՐԺԱՆԹԻՆ. Պուէնոս-Այրէս՝ Արմենիա, Հայ կեդրոն, Նոր Հաճըն, Նոր սերունդ, Շարժում:

ԵԳԻՊՏՈՍ. Աղեքսանդրիա՝ Հայ դպրոց. Գահիրէ՝ Ազատ միտք, Աւետարանի ձայն, Գրասէրի առաջնորդ, Ջէփլին, Սաւառնակ:

ԵՐՈՒՍԱՂԷՄ. Պատգամաւոր, ՀԵՄ (Հայ Երիտասարդաց Միութիւն) :

ԹՈՒՐՔԻԱ. Կ. Պոլիս/Ստամպուլ՝ Ջարթօնք, Հայ նկար, Նոր լոյս, Նոր յոյս, Պատկեր, Վաստակ:

ԼԻԲԱՆԱՆ. Անթիլիաս՝ Հասկ. Պէյրութ՝ Առաւօտ, Արարատ, Աւետիք, Երիտասարդ Հայուհի, Զարթօնք, Ժողովուրդի ձայն, Ծիածան, Հայ գիր, Հայ պատանի, Հորիզոն, Պատանեկան արձագանգ:

ԿԻՊՐՈՍ. Նիկոսիա՝ Այգ:

ՅՈՒՆԱՍՏԱՆ. Աթէնք՝ Ամրոց, Արամազդ, Երեւան, Վերածնունդ, Փունջ:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. Թէհրան՝ Բոբոխ Նոր էջ, Նոր Հասկեր:

ՊԵԼՃԻՔԱ. Պրիւսէլ՝ Հայ աշխարհ:

ՊՈՒԼԿԱՐԻԱ. Սոֆիա՝ Իզմիր ակա, Մրգաստան, Ռազմիկ, Տարօնի արծիւ, Տեղեկատու:

ՌՈՒՄԱՆԻԱ. Պուքրէշ՝ Արազ, Հայ մամուլ, Հերկ, Նորավէպ, Քնաբեր:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ. Ախալիցէ՝ Դէպի սոցիալիզմ, Կոմունիստ. Ախալքալաք՝ Բոլշեւիկեան կոլխոզ, Սոցիալիստական անասնաբուծութիւն. Թիֆլիս՝ Անդրկովկասի երկաթուղային, Գրոհ, Խորհրդային Վրաստան ( նախապէս Մարտակոչ, Պրոլետար ):

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ. Ալեքպոլ/Լենինական՝ Երկաթուղային, Ճակնդեղի Ֆրոնտում, Մանածագործ, Ստալինեան ուղի, Ստալինեան ուղեկից. Աշտարակ՝ Այգեգործ կոլխոզնիկ. Արտաշատ՝ Բոլշեւիկեան տեմպով, Հարուածային բրիկադ. Գորիս՝ Կարմիր Զանգեզուր, Ստալինեան դրօշով. Դիլիջան՝ Ստալինեան արշաւ. Երեւան՝ Անաստուած, Առողջապահական ֆրոնտում, Արդիւնաբերական կոոպերացիա, Գրական թերթ, Գրական սերունդ, Դէպի համատարած գրականութիւն, Խորհրդային արուեստ, Խորհրդային գրականութիւն, Խորհրդային դպրոց, Խորհրդային մանկավարժ, Խորհրդային ճարտարագէտ, Խորհրդային Հայաստան (յետագային այս բոլոր Խորհրդային-ները Սովետական-ի կը վերածուին), Կաուչուկի համար, Կարմիր միլիցիա, Կարմիր սպորտ, Կարմիր ֆրոնտ, Կովառ, Կոմունիստական լուսաւորութիւն, Կուսաշխատող, Հարուածային բանւոր, Հարուածային կառուցանող, Հարուածային կարող, Հարուածային ուսանող, Հարուածային ֆիզկուլտուրիկ, Նոր կեանք, Պարտաշխատող, Պրոպականտիստ, Տեխնիկան մասսաներին, Տպագրիչ, Քանաքեռշէն, Ֆիզկուլտուրա եւ սպորտ, Էջմիածին:

ՍՈՒՐԻԱ. Հալէպ՝ Երեւան:

ՖՐԱՆՍԱ. Գոլոմպ՝ Հայ պանդուխտ. Լիոն՝ Ակօս, Աքլոր, Բանբեր, Կայծեր, Շարժում. Մարսէյլ՝ Ազատ խօսք, Արեգ, Գոյամարտ, Ժողովուրդի ձայն, Ծաղկաձոր, Հայ մարտիկ, Շեփոր, Շնորհաց ցօղեր, Սահակ-Մեսրոպ. Փարիզ՝ Ազգ, Ամրոց, Արագած, Արշալոյս, Բարիզ-Արեւելք, *Paris-Levant*, Բուրաստան, Դարբնոց, Զանգ, Զանգու, Լուսաբաց, Կեանք եւ Արուեստ, Հայ բուժ, Հայ կամաւոր, Հայ մարտիկ, Հայրենաշէն, Հայ կեանք, ՀՕԿ, Մենք, Մեր տունը, Մշակոյթ, Նաիրի աշխարհ, Նոր Կավռօշ, Նոր կեանք, Նոր սերունդ, Նպատակ, Ռազմիկ, Վարուցան, *Le Foyer*, *Fraternité*:

**Քանի մը գիրք՝**

Մ. Աբեղեան՝ Հայ լեզուի տեսութիւն. Թ. Ազատեան՝ Կոմիտաս վարդապետ, Արմաղան. Ց. Ալիքսանեան՝ Արշակ Չօպանեան. Ա. Ալպօյաճեան՝ Պատմութիւն Հայ Կեսարիոյ. Ա. Արփիարեան՝ Պատմուածքներ եւ վիպակներ:

Ս. Բախտիկեան՝ Արաբկիր եւ շրջակայ գիւղերը. Բաբկէն վրդ.՝ Հայ Կիպրոս. Գ. Բարսեղեան՝ Ամբողջական գործը. Լ. Բաշալեան՝ Թրքահպատակի մը արկածները Մեծ Պատերազմին ատեն:

Գեղարքունի՝ Թօշնելէն վերջ. Ա. Գիւլխանդանեան՝ Ազգային շարժումներ, Կովկաս Հայ-թաթարական ընդհարումներ. Ց. Գույումճեան՝ Այս է Ամերիկան, Եգիպտոս, Լենինեան երգեր, Փոթորիկ. Ա. Գրաշի՝ Ժողովուրդին հետ, Քնարական:

Մ. Ս. Դաւիթ-Բէկ՝ Լուսինեանները. Ա. Դարբինեան՝ Հայ ազատագրական շարժումներու օրերէն յուշեր:

Զ. Եսայեան՝ Սիլիհտարի պարտէզները. Մ. Երիցանց՝ Զօր. Սմբատի յուշերը. Հ. Զարդարեան՝ Որբացող մարդիկ. Կ. Զարեան՝ Երկիրներ եւ աստուածներ. Ն. Զարեան՝ Հացաւան. Պ. Զարոյեան՝ Սեւ ցիլերի սերմնացանը. Ս. Զօրեան՝ Սպիտակ քաղաքը, Մի կեանքի պատմութիւն. Գ. Էմին՝ Նախաշաւիղ. Վ. Թաթուլ՝ Հին եւ նոր տաղեր. Գ. Թահմազեան՝ Պայքարի եւ յաղթանակի տարիներ. Ա. Թէրզիպաշեան՝ Արծիւը բոյնին մէջ. Վ.

# 1931 - 1940

Թէքէեան՝ *Մթնոլորտ*. Վ. Թոթովենց՝ *Կեանքը հին հռովմէական ճանապարհի վրայ*. Բ. Թօփալեան՝ *Արեւագալ*:

Ա. Իսահակեան՝ *Նրանք դրօշակ ունեն*. Հ. Իփէկեան՝ *Խաւարած ընտանիքը*:

Լաս՝ *Հարցականի ուղիներով*. Լէօ՝ *Թրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը*. Գ. Լեւոնեան՝ *Հայ աշուղներ*:

Ա. Կէնճեան՝ *Ազգային հարց եւ Տաճկահայաստան*. Գ. Կառվարենց՝ *Տաւիղ եւլեան*:

Հ. Հայրապետեան՝ *Մեղուների կոմունան*:

Ա. Ղանալանեան՝ *Հայ շինականի աշխատանքի երգերը, Սասունցի Դաւիթ*:

Ս. Մալխասեան՝ *Խորենացիի Հայոց Պատմութիւնը*. Ց. Մանանդեան՝ *Խորենացու առեղծուածի լուծումը, Տիգրան Բ. եւ Հռոմ*. Լ. Մեսրոպ՝ *Զարի, Հաշիշին, Զրոյց պարսկահայ բարեկամիս հետ, Քէրպէլայի գիշերները*. Ղ. Մելոյեան՝ *Արմենուշ*. Մ. Մեծարենց՝ *Ոսկի արիշին տակ, Երկերի լիակատար ժողովածոյ*:

Ա. Ցարութիւնեան՝ *Արձակ էջեր եւ քերթուածներ*. Ա. Յովհաննէսեան՝ *Նշան Պէշիկթաշլեան*:

Շ. Նարդունի՝ *Մեղեդիներ, մեղեդիներ*. Վ. Նաւասարդեան՝ *Աշխարհի նոր բաժանումը*. Բ. Նուրիկեան՝ *Այգեկութք*:

Մարիէտտա Շահինեան՝ *Հիտրոցենտրալ*. Շ. Շահնուր՝ *Յարալէզներու դաւաճանութիւնը*. Ց. Շիրազ՝ *Գարնանամուտ, Սիամանթօ եւ Խճէզարէ*:

Զ. Մ. Որբունի՝ *Վարձու սենեակ*:

Ե. Չարենց՝ *Երկիր Նայիրի, Գիրք ճանապարհի*. Ա. Չարըգ՝ *Օմար Խայեամի քառեակները*:

Ն. Պէշիկթաշլեան՝ *Սոսկալի Նազար, Րապպի*. Մ. Պէրպէրեան՝ *Արեւոտ պահեր*:

Ռ. Սամուէլեան՝ *Հայ հին իրաւունքի պատմութիւն, Հին Հայաստանի կուլտուրան*. Կ. Սասունի՝ *Ապրիլեան եղեռնը, Գէորգ Չաւուշ*. Գ. Սարաֆեան՝ *Վարդանանց պատերազմը եւ Վարդան Մամիկոնեան*. Ն. Սարաֆեան՝ *Իշխանուհին, Խարիսխէն հեռու, 14 քերթուած*:

Մ. Վարանդեան՝ *Հ. Յ. Դ. պատմութիւն*:

Հ. Տ. Տաշեան՝ *Հայ ազգի տարագրութիւնը գերմանական վաւերագրերու համեմատ*. Տ. Տօնիկեան՝ *Ինչո՞ւ հայ ազգը չյաջողիր քաղաքական գետնի վրայ*:

---

**Մահեր**

1931 Գնէլ եպ. Գալէմքեարեան, պատմաբան Հ. Գր. Գովրիկեան, մատենագէտ Հ. Արսէն Ղազիկեան, ազգագրագէտ Եր. Լալայեան, գրագէտ-պատմաբան Լէօ (Առաքել Բաբախանեան), մանկավարժ-գիւղագէտ Յովհ. Մալխասեան, պետ. գործիչ եւ թարգմանիչ Յովհ. խան Մասեհեան, զօր. Թովմաս Նազարբեկեան, բանաստեղծ Ռուբէն Որբերեան, գրագէտ Օննիկ Չիֆթէ-Սարաֆ (Յովհ. Աբիսողոմոնեան Ասպետ) :

1932 երաժշ. Սպիրիտոն Մելիքեան, գրագէտ Նար-Դոս (Միք. Յովհաննէսեան), Կ. Պոլսոյ երրորդութիւն եկեղեցւոյ դպրապետս Լեւոն Չիլինկիրեան, դերասանուհի Սիրանոյշ (Մեհրապէ Գանթարճեան), բանասէր Հ. Յակոբոս Տաշեան:

1933 Սանասարեանի նախկին տնօրէն Գէորգ Աբուլեան, Օհան Կարօ (Յովհ. Կարապետեան), Նիւ-Եորքի առաջնորդ Ղեւոնդ արք. Դուրեան, Թուրքիոյ հանր. Շինութեանց նախկին նախարար Գ. Սինանեան, Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ խորհրդարանի նախագահ Աւետիք Սահակեան:

1934 Կ. Պոլսոյ Կեդրոնական վարժարանի նախկին ուսուցիչս Ց. Գույումճեան, ճարտարապետ Թորոս Թորամանեան, Հարաւային Ֆրանսայի առաջնորդ Գրիգորիս եպ. Պալաքեան:

1935 երկրագործ, հասարակ. գործիչ Երուանդ Աղաթօն, ժողովրդ. երգահան Կոմիտաս վրդ. (Սողոմոն Սողոմոնեան), Արեւել. Կենդ. լեզուներու հայերէնի ուսուցիչ Բրոֆ. Ժոնվալ, հայագէտ Նիքոլա Մառ, մանկ. գրագէտ Խնկօ Ապեր (Աթաբեկ Խնկոյեան):

1936 Դերասան Յովհ. Աբէլեան, աթոռակից Մեծի Տանն Կիլիկիոյ Բաբկէն Կիւլէսէրեան, հասարակ. գործիչ Գուրգէն Թահմազեան, Կ. Պոլսոյ Էսայեան վրժ. նախկին տնօրէնս Հայկ Խօճասարեան, Արեւել. Կենդ. լեզուներու հայերէնի ուսուցիչ Անթուան Մէյէ, Օսմանեան արտաքին գործերու նախկին նախարար Գաբրիէլ Նորատունկեան:

1937 Գրագէտ Ատրպետ (Սարգիս Մուպահաճեան), դերասան Յովհ. Զարիֆեան, պետական գործիչ Աղասի Խանջեան, ծովանկարիչ Վարդան Մախոխեան, երգահան Ստեփան Էլմաս, Փարիզի ուսանող. ոստանի հայկ. տաղաւարի ճարտարապետ Լեւոն Նաֆիլեան, հնդկահայ պատմագիր Մեսրովբ Յ. Սէթեանց:

1938 Բանասէր Մ. Ս. Դաւիթ-Բէկ (Մարտիրոս Սարգիսեան), Ամ. Հայոց կաթողիկոս Սուրէն Ա. Մուրատբէգեան, երգիչ Արմենակ Շահմուրատեան:

1939 Երուսաղէմի պատրիարք Թորգոմ արք. Գուշակեան, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Սահակ Բ. Խապայեան, գրագէտ Արտաշէս Յովհաննէսեան:

1940 Հայազգի ռումէն քաղ. գործիչ Թրանքու-Եաշ, Կ. Պոլսոյ Կեդրոնական վրժ. ի երգի ուսուցիչս Գր. Սիւնի (Միրզոյեան), Մուսա Տաղցիներու փրկիչ ֆրանսական ծովային ուժի հրամանատար ծովակալ Տառթիժ տիւ Ֆուռնիէ, Փարիզի հոգեւոր հովիւ Վռամշապուհ արք. Քիպարեան Արջուկենց, գրագէտ Գեղամ Աթմաճեան, ազգ. հերոս Միսաք Մանուշեան:

# NOISY - LE - GRAND

SAMEDI 5 OCTOBRE

(de 14 h. à 19 h.)

et

DIMANCHE 6 OCTOBRE 1991

(de 10 h. à 19 h.)

l'Association Culturelle Arménienne
de Marne-la-Vallée

*vous accueillera sur son stand*
*dans le cadre du*

# FORUM DES ACTIVITES NOISEENNES

Gymnase du Centre
à Noisy-le-Grand (93160)
Rue Emile Cossoneau, près de la Mairie
RER Noisy-Mont-d'Est, Bus 120, 220, 303, 320

*Animations - Fête foraine - Brocante*

*Venez nombreux !*